# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՍԱԷ ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | ՍԱԷ ՍՊԸ | ՍԱԷ ՍՊԸ | ՍԱԷ ՍՊԸ | ՍԱԷ ՍՊԸ | Կեպին մուգ կապույտ Midnight Navy (սև երանգին մոտ) #070a25 Color Palette գունի սանդոս կամ նմանատիպ կտորից: Բաղադրությունը՝ առնվազն 55% բամբակ, առավելագույնը 45% պոլիէսթեր, քաշը 1մ2 240գրամ, ±3%: Մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, որը տրվում է կտորը արտադրողի կողմից: Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ պլաստմասե կորացված գլխարկահովհարից: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Գլխարկահովարի հաստությունը` 3մմ, իսկ երկարությունը կենտրոնական մասում 7 սմ, որի եզրագիծը սպիտակ կտորով մշակված: Թասակը բաղկացած է հինգ կտորից, որոնք վերևի կենտրոնական մասում ունեն ասեղնագործված օբանցքներ: Թասակի առաջնամասը ներսից կոշտացված է, որը ապահովում է ուղիղ և կլոր տեսք, թասակի ներսում յուրաքանչյուր կարի վրա փակցված է նեղ տեքստիլային ժապավեն, որը ապահովում է ամրություն: Թասակը միացված է գլխարկահովարին 3սմ լայնությամբ ժապավենով, որի վրա առկա է 4 զարդակար: Հովարի վրա կարվում է 5 զարդակար` իրարից 7մմ հեռավորությամբ: Ետևի աջ մասում` մետաղական արծաթագույն կարգավորիչ: Թասակի կենտրոնում ամրացված է կլոր կոճակ, որը միացնում է թասակը, իսկ ներսից պիտակ` գրված չափսը: Առջևի կենտրոնական մասում կարվում է սպիտակ թելով ասեղնագործված 4X13սմ «POLICE», իսկ ետևում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 1X8սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Գլխարկը պետք է ունենա կլոր թասակ: Ետևի բացվածքի խորությունը կենտրոնական մասում 5,5սմ-ից ոչ պակաս: Պատվիրատուն տրամադրում է հաստատված և կնիքված նմուշ: Ապրանքը ընդունվում է հաստատված նմուշի համաձայն: Չափսերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Արտաքին տեսքը` լուսանկարին համապատասխան: Փաթեթավորումը` պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 25 հատ, որը տեղադրվում է ստվարաթղթե արկղի մեջ, յուրաքանչյուր արկղի մեջ 100 հատ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО САЭ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | | | |